ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Անցեալ մարտի ին Աղդիս Վ.Եհ. Հայրապետը, ուղեկցութեամբ Դիւանապետ տ. Կորիւն վարդապետի և Նորընծայ Ներսէս աբեղայի բարեհաճեց իւր շնորհաբեր այցելութեամբ պատուել Թիֆլիս քաղաքը։

Վեհափառն այն դիտաւորութեամբ էր ս. Էջմիածնից մեկնել, որ պէտք է այցելէր մի քանի թեմերը և այդ մասին ծանուցուած էր արդէն վիճ. Առեաններին։ Թեմական քաղաքներում արդէն սկսել էին ընդունելութեան պատրաստութիւններ տեսնել և այդ մասին կարդում ենք „Աստրախանսկի Վեստնիկ“ լրագրում, որ աստրախանցի հայերը երկար խորհրդակցութիւն են ունեցել Նորին ս. Օծութիւն ամենայն Հայոց կաթողիկոսի ընդունելութեան համար, որ այս օրերս պիտի ժամանէր Հաշտարխան։ Ժողովում ներկայ եղողների մէջ հանգանակուել է 5000 ռուբլի ընդունելութեան ծախքերի համար, ընտրուել են 20 ներկայացուցիչներ, որոնք առանձին վարձուած շոգենաւով կընդառաջեն կաթուղիկոսին, ընտրուած է կարգադրիչ մասնաժողով 12 անձերից և տեսնւում են մեծ պատրաստութիւններ։ Հայոց թեմ. Դպրոցի երկրորդ յարկը դատարկւում է և շքեղ կահաւորւում, պիտի շինուին մի քանի յաղթական կամարներ՝ նաւամատոյցի մօտ, դպրոցի առաջ։ Հայոց եկեղեցիները զարդարւում են, երեկոները հրաւառութիւն է նշանակուած և այլն։ Նման պատրաստութիւններ են տեսնուել և Քիշնեւում, ինչպէս հաղորդեց ռուս դրծակալութեան հեռագիրը։ Մասնաւոր թղթակցութիւններից մեզ յայտնի է, որ նման շքեղ պատրաստութիւններ էին տեսնւում և Շամախի, Գանձակ և Բաքու։ Սակայն, Վեհափառը, 11 օր Թիֆլիս մնալուց յետոյ վերադարձաւ ս. Էջմիածին Տօնական օրերը Մայր Աթոռում անցնելու։

ԱՄԵՐԻԿԱՑԻ ԼԵՀԵՐԸ ՀԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՎԱՆՈՒ ՆԵՐՔՈՑ

Մեր ընթերցողներին արդէն յայտնի է, որ Ամերիկա ընակուող լեհերը, իսպառ հեռանալով Հռովմի եկեղեցու հետ հաղորդակցութիւնից, ցանկացան կազմել իրանց համար ինքնուրոյն եկեղեցի և դիմելով Աղդիս Վ.Եհ. Հայրապետին՝ խնդրեցին ձեռնադրել իրանց համար եպիսկոպոս։ Վ.Եհ. Հայրապետը առաջարկել էր կանխապէս որոշել իրանց յարաբերութիւնը Մայր Աթոռի հետ, որից պիտի ստանան ցանկացած շնորհը։

Այժմ, ինչպէս տեղեկանում ենք, լեհացիները դիմել են վեհափառին մի պաշտօնագրով, հաստատուած ամերիկեան քաղաքական իշխանութեան կողմից, որի մէջ ասում են, թէ Ամերիկայի Միացեալ նահանգների պօլօնացիք հաւաքուելով Պեն-

սիլվանիոյ Սկրանտոն քաղաքը 1902 թ. հոկտ. 16-ին՝ որոշեցին.

ա. Նորին սրբութիւն ամենայն Հայոց կաթուղիկոսի գերիշխանութիւնը ճանաչել գլուխ առաքելական եկեղեցւոյ փոխանակ Հռովմի պապի, որի հետ նոցա ամեն կապը լուծուած է վեց տարուց ի վեր։

բ. Աղաչել Ն. Ս. Օ. ամենայն Հայոց կաթուղիկոսին, որ հաճի վերապատուելի Ֆրանսուա Հոդուրին ձեռնադրել եպիսկոպոս պօլօնաց ազգային եկեղեցու Ամերիկայում, (այստեղ բացատրում են իրանց եկեղեցու դաւանութիւնը և աւելացնում են որ իրանց եկեղեցու բոլոր պաշտամունքը պիտի լինի ազգային լեզուով և ոչ լատին բարբառով)։

Եւ փափագում են, որ այսուհետև իրանց եպիսկոպոսները ընտրուեն իրանց քահանաներից և հաւատացեալներից և հաստատուեն ամենայն Հայոց Հայրապետի սուրբ օծմամբ։ Նոցա քահանայք այսուհետև ս. պատարագին կիշատակեն նախ՝ առաքելական եկեղեցու գլուխ ամենայն Հայոց կաթուղիկոսին, երկրորդ՝ իրանց պօլօն եպիսկոպոսին. ի վերայ այսր ամենայնի աշխարհի չորս կողմը սփռուած բոլոր հարստահարուած պօլօնացիներին։

Եւ արդ, գրում են նոքա, լի վստահութեամբ դարձնելով մեր աչքերը առ Ձերդ սրբութիւն՝ խոնարհաբար աղաչում ենք առնուլ մեզ Ձեր հովանու տակ և աջակից լինել մեզ բարոյապէս ձեռնադրելով մեր ընտրած Ֆրանսուա Հոդուրին եպիսկոպոս։

Վերջապէս խոստանում են հաստատուն մնալ ս. դրոց հաւատի և եկեղեցւոյ աւանդութեանց մէջ, որ առաջին դարերից հասել է մեզ, և իրանց կեանքում ցոյց կտան, որ Հայաստանեայց եկեղեցուց ստացած այդ շնորհը ընդունայն չի անցնի։

Մի լաւ դաս պապամոլ Մխիթարեանների համար։

ԿԻԼԻԿԻՈՅ Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ՕԾՈՒՄԸ

Ինչպէս արդէն հաղորդել էինք „Լուսոյ"-ի անցեալ համարում, Կիլիկիայի Նորընտիր տ. Սահակ կաթուղիկոսը արդէն մեկնել է ս. Երուսաղէմից դէպի Սիս ս. Օծումն ընդունելու համար։ Լրագիրները հաղորդում են մանրամասնութիւններ Նորին վեհափառութեան փառաւոր ընդունելութեանց մասին դանագան քաղաքներում։ Կաթուղիկոսն արդէն հասել է Սիս, ուր և ընդունուել շքեղ հանդիսով և անցեալ մարտ 29-ին, ծաղկազարդի օրը, նշանակուած էր օծման հանդէսը։ Խմբագրութիւնս պարտք համարեց իւր խնդակցութիւնն յայտնել Տ. Սահակ կաթուղիկոսին՝ Ադանս ուղղուած մի հեռագրով։